




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3148

Ի. ՍՏԱԼԻՆ

21 JUN 2005

3K33

L-35

11 NOV 2000

Լ Ե Ն Ի Ն Ի Մ Ա Ս Ի Ն

1. ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՄ ՌԿԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ
ՅԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ
ՀՈՒՎԱՆ ԼԵՆԻՆԻ ԾՆՆՎԵԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ (ԱՊՐԵԼ 1920 Թ.)

2. ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ
ՀԱՌ ԿՐԵՄԼԵՆ ԳՈՒՐԱՄԱՆՏՆԵՐԻ ՃԵՐԵԿՈՒՅԹՈՒՄ
(1924 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 28)

3K33

L-35

Պ Ս Ց Հ Ր Ա Ց
ՅԵՐԵՎԱՆ 1932

Լ Ե Ն Ի Ն Ը

ՎՈՐՊԵՍ ՌԿԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ

ՀՈՒՎԱՄ ԼԵՆԻՆԻ ԾՆԵՂՅԱՆ 50-ԱՄ ՅԱԿԻ ԱՌԹԻՎ (ԶՊՐԱՎՄԱՆ № 86, ԱՊՐԵԼ, 1920 Թ.)

Գոյութիւն ունի մարքսիստների յերկու խումբ: Նրանք յերկուսն էլ աշխատում են մարքսիզմի դրուշի տակ, իրենց համարում են զրուս» մարքսիստական: Բայց այնուամենայնիվ նրանք ամենևին նույնը չեն: Այլևի՛ն. նրանց միջև կա մի ամբողջ անդունդ, վորովհետև նրանց աշխատանքի մեթոդները տրամադծորեն հակադիր են:

Առաջին խումբը սովորաբար սահմանափակվում է մարքսիզմն արտաբուստ ընդունելով, նրա հանդիսաւոր հռչակումով: Զկարողանալով, կամ չկամենալով թափանցել մարքսիզմի էություն մեջ, չկարողանալով, կամ չկամենալով այն կենսադրծել, նա մարքսիզմի կենդանի ու հեղափոխական գրույթները վերածում է մեռած, վոչինչ շատող ֆորմուլաների: Իր գործունէությունը սահմանափրում է վոչ թե փործով, վոչ թե գործնական աշխատանքի հաշվառումով, այլ Մարքսից բերած ցիտատներով: Նա ցուցումներ է դրելկտիկներ քաղում է վոչ թե կենդանի իրականության վերլուծությունից, այլ անալոգիաներից և պատմական պարալելներից: Խոքի և գործի անջատում—այդպիսին է այս խմբի հիմնական հիմնադրությունը: Այստեղից են հիստորիոսկոպիկները և մշտական դժգոհությունը բախտից, վորը յարունակ և ամենուրեք խարում է նրան, թողնում ձեռնուշան: Այդ խմբի անունն է մեղեկործ (Ռուսաստանում), ոսյորտունիզմ (Յեւրոպայում): Ընկ. Տիշկոն (Յողիխես) լոնդոնյան համադումարում բալական սուր բնորոշեց այդ խմբին, ասելով, թե նա վոչ թե կանգնած է, այլ պառկած է մարքսիզմի տեսակետի վրա:

Յերկրորդ խումբն, ընդհակառակը, հարցի ծանրության կենտրոնը մարքսիզմն արտաբուստ ընդունելուց փոխադրում է նրա կիրառման, նրա կենսագործման վրա: Նշել մարքսիզմի իրագործման այնպիսի ուղիներ ու միջոցներ, վորոնք համապատասխանեն իրագրությանը, փոխել այդ ուղիներն ու միջոցները, յերբ իրագրությունը փոխվում է, անա թե դիսկուրսային ինչի վրա յե այդ խումբն ուղղում է իր ուշադրությունը: Դերեկտիվներ և ցուցումներ այդ խումբը քաղում է վոչ թե պատմական անալոգիաներից ու պարալելներից, այլ չընապատի պայմանների ուսումնասիրությունից: Իր գործունէությունը մեջ նա հենվում է վոչ թե ցիտատների և ասացվածքների վրա, այլ գործնական փործի վրա, իր յուրաքանչյուր քայլն ստուգելով փործով, իր սխալների վրա սովորելով և ուրիշներին սովորեցնելով նոր կյանքի կառուցումը: Հենց զբաղում էլ բացատրվում է այն, վոր այս խմբի գործունէությունը մեջ խոքը չի անջատվում գործից, և Մարքսի ուսմունքն ամբողջապես պահում է իր կենդանի հեղափոխական ուժը: Այս խմբին լիովին ցաղական են Մարքսի

այն խոքերը, ըստ վրանց մարքսիստները չեն կարող կանգ տանել այն բանի վրա, վոր աշխարհը բացատրեն, այլ պետք է առաջ դնան այն հաշվով, վոր փոխեն այդ աշխարհը: Այդ խմբի անունն է բայլեկործ, կոծունիզմ: Այդ խմբի կաղմակերպիչն ու առաջնորդը հանդիսանում է Վ. Ի. Լենինը:

1. ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Պրուետարական կուսակցության կաղմուծյունը Ռուսաստանում ընթացել է հասունել պայմաններում, վորոնք տարբեր են այն պայմաններից, վոր կային Արեւմտեղում բանվորական կուսակցության կաղմակերպման պահին: Մինչդեռ Արեւմտեղում, Յրանսիայում, Գերմանիայում, բանվորական կուսակցությունը դուրս է յեկել արհեստակցական միություններից՝ միությունների և կուսակցությունների լեղալ գոյութիւն պայմաններում, բուրժուական հեղափոխութիւնից հետո ստեղծված իրադրության մեջ, յերբ կար բուրժուական պարլամենտ, յերբ իշխանության դուրսն անցած բուրժուական դեմ առ դեմ երկանդնած պրուետարիստին,—Ռուսաստանում, ընդհակառակը, պրուետարական կուսակցության կաղմուծյունը տեղի յեր ունենում ամենաանողոք բացարձակ միակետության դրով, բուրժուադեմոկրատական հեղափոխության սպառման միջուրում, յերբ մեկ կաղմից՝ կուսակցական կաղմակերպությունները լեցվում էին բանվոր դասակարգին բուրժուական հեղափոխության համար ուղադրծելու ծարալի բուրժուական «լեղալմարքսիստական» տարրերով, մյուս կողմից՝ լալիպունի կուսակցական աշխատողներին ցարական ժանդարմերիս դուրս եր կորչում կուսակցության շարքերից, մինչդեռ տարերային հեղափոխական շարժման աճումը պահանջում եր հեղափոխականների կայուն, միաձուլ և բալականաչափ կոնսպիրատիվ մարտական կորից, վորը կարողանար շարժումն ուղղել բացարձակ միակետության տաղալման կողմը:

Խնդիրն այն եր, վոր հարկաւոր եր վոչխարներին ջոկել այծերից, սահմանադրուլել խորթ տարրերից, անդերում կաղմակերպել փործված հեղափոխականների կաղերը, նրանց տալ հստակ ծրադիր և ամուր տակտիկա, վերջապես, այդ կաղերին համախմբել պրոֆեսիոնալ հեղափոխականների մեկ մարտական կաղմակերպության մեջ, վորը բալականաչափ կոնսպիրատիվ լինեք ժանդարմական հարձակումներին դիմադրու համար, բայց դրա հետ մեկտեղ՝ բալականաչափ կաղված մասսայի հետ, նրանց հարկ յեղած դեղքում պայքարի տանելու համար:

Մենչեկիները, հենց նրանք, վոր զառուկած են մարքսիզմի տեսակետի վրա, հարցը լուծում էին հասարակ ձեռով. քանի վոր Արեւմտեղում բանվորական կուսակցությունը դուրս է յեկել բանվոր դասակարգի տնտեսական դրության բարելալման համար պայքարող անկուսակցական արհեստակցական միություններից, ալա Ռուսաստանում հարկաւոր է հնարավորության չափով անել նույն բանը, այսինքն՝ առայթ բալականաչափ տեղերում զբանվորների տնտեսական պայքարով ընդդեմ տերերի և կառալարության, առանց համառուսական մարտական կաղմակերպություն ստեղծելու, իսկ հետո...հետո, յեթե մինչև այդ արհեստակցական միություններ հանդես չգան, անկուսակցական

ցանկուն բանվորական համագումար հրավիրել և նրան կուսակցություն հայտարարել:

Այն մասին, վոր մենչեիկները՝ ուսական պայմանները համար ուտոպիական այս «մարքսիստական» «պլանը» յենթադրում և, այնուամենայնիվ, լայն աղիտացիոն աշխատանք, վոր նպատակ ունի նսեմացնել կուսակցականությունը իրեն, վոչնչայնի կուսակցական կադրերը, պրոլետարիատին թողնել առանց իր կուսակցության և բանվոր ղառակարգին լիկերակները ճանկը նետել,—այդ մասին հազիվ թե զլորի ընդենյին այն ժամանակ մենչեիկները, թիրեա նաև թայլենիկները չտարբեր:

Լենինի մեծագույն ծառայությունը ուսական պրոլետարիատի և նրա կուսակցության առաջ կայանում և այն բանում, վոր նա բաց արավ մենչեիկյան կադակներպական «պլանի» ամբողջ վստանդը դեռևս այն պահին, յերբ «պլանը» հաշիվ—հաջ սաղմնավորված և, յերբ իրենք՝ «պլանի» հեղինակները դժվարությամբ եյին պարզ պատկերացնում նրա գծավորումները, և բաց անելով այդ, կատարի գրոհ սկսեց մենչեիկները կադակներպական սանձաքանկության դեմ, պրակտիկների վողջ ուղարկությունը կենտրոնացնելով այդ հարցի վրա: Վորովհետև խոտքը կուսակցության գոյություն մասին և, կուսակցության մահու և կենաց մասին եր:

Կադակներպիկ համառուսական քաղաքական լրագիր իրրե կուսակցական ուժերի ձգման կենտրոն, կադակներպիկ տեղերում կայուն կուսակցական կադրեր իրրե կուսակցության «կանոնավոր դորամաեր», լրագրի միջոցով ի մի հաղթել այդ կադրերին և նրանց համախմբել ցայտուն գծված սահմաններ, հստակ ծրագրի, ամուր տակտիկա և միասնական կամք ունեցող համառուսական մարտական կուսակցության մեջ,—հաշ ինչպիսի պլան և, որ ղարդացնում Լենինն իր «ի՛նչ անել» և «Վեկ քայլ առաջ, յերկու քայլ հետ» նախավոր դրույկներում: Այս պլանի արժանիքն այն եր, վոր նա ամբողջապես համադաստականում և, ուսական իրականությունը և վարպետորեն ընդհանրացնում եր լավագույն պրակտիկները կադակներպական փորձը: Այս պլանի համար մղած պայքարում ուսական պրակտիկները մեծ մասը վճռականորեն գնաց Լենինի հետեից, կանգ չառնելով պառակտման առաջ: Այս պլանի հաղթանակը հիմք դրեց այն միաձույլ և կոփված կոմունիստական կուսակցության, վորին հավասարը չկա աշխարհում:

Հաճախ մեր ընկերները (և վո՛չ միայն մենչեիկները) Լենինին մեղադրում եյին պրոմեիկայի և պատակոման չափազանց մեծ հակում ունենալու, հաշտ—վողականների դեմ անհատ պայքարելու և այլ խնդիրներում: Անտարակույս, թե՛ մեկը և թե՛ մյուսը տեղի յեն ունեցել իր ժամանակին: Բայց դժվար չե հասկանալ, վոր վեր կուսակցությունը չեր կարողանա աղատվել ներքին թուլությունից և ճապարկությունից, նա չեր կարողանա իրեն յուրահաճախ ուժին ու ամբողջանք հասնել, յեթև նա իր միջից չվտարել վոչ—պրոլետարական, ոպորտունիստական տարրերին: Բուրժուական տիրապետության դարաշրջանում պրոլետարական կուսակցությունը կարող և անել և ամբանալ միայն այն չափով, ինչ չափով նա պայքարում և ոպորտունիստական, հակահեղափոխական և հակակոմունիստական տարրերի դեմ իր ներսում և քանվոր դասա-

կարդի մեջ: Դաստառն իրավացի չե, յերբ նա ասում և, թե «կուսակցությունն ամբանում և այն բանով, վոր մաքրում և իրեն»: Մեղադրողները սովորաբար մատնանում եյին դեմոստական կուսակցությունը, վորտեղ այն ժամանակ բարգավաճում և, «միասնությունը»: Բայց, առաջին, ամեն միասնություն ուժի նաև չե, յերկրորդ, բավական և մի հայացք նետել յերեք կուսակցությունների պառակտված այդ նախկին դեմոստական կուսակցության վրա, հակահակում համար Շեյդեմանի և Նոսիկի, նրանց հետ նաև Լիբկնեխտի և Լյուքսեմբուրգի «միասնության» ամբողջ կեղծիքն ու ցերեակայական լի—նելը: Յեվ ի՛նչ իմանա, ավելի լավ չե՛ր լինի արդյոք դեմոստական պրոլետարիատի համար, յեթև դեմոստական կուսակցության հեղափոխական տարրերն իր ժամանակին անջատվելն նրա հակահեղափոխական տարրերից: Վո՛չ, Լենինը հազար անգամ իրավացի չե՛ր՝ կուսակցությունը տանելով հակահեղափոխական և հակահեղափոխական տարրերի դեմ անհատ պայքարելու ուղիով: Վորովհետև միայն այդպիսի կադակներպական քաղաքականության հետևանքով մեր կուսակցությունը կարող և, իր մեջ ստեղծել այն ներքին միասնությունն ու զարմանալի միաձուլությունը, վորպիսին ունենալով նա անհիմադազին կերպով գուրս յեկավ հուլիսյան ճշմարտեից ցերեկուս որով, իր ուսերի վրա տարավ Հոգսեմբերյան ապստամբությունը, առանց ցնցումաների անցկացրեց բրեստյան չրլանի ճշմարտամը, կազմակերպեց հաղթանակն Անտանտայի դեմ և վերջապես մեծը թերեց այն չտեսնված ճիշտությունը, վորի շնորհիվ նա ի վիճակի չե ուղած պահին վերակադմել իր շարքերը և իր հարյուր—հազարավոր անդամներին կենտրոնացնել ամեն մի մեծ աշխատանքի շուրջը, առանց իր ներսում չփոթություն առաջացնելու:

2. ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԻ

Բայց Ռուսական կոմունիստական կուսակցության կադակներպական արժանիքները խնդրի լուկ մեկ կողմն են ներկայացնում: Կուսակցությունը չե կարողանա այդքան արագ անել և ամբանալ, յեթև նրա աշխատանքի քաղաքական բոլանգակությունը, նրա ծրագրերը և տակտիկան չհամապատասխանելն ուսական իրականությանը, յեթև նրա լողունդները չհրահրելին բանվորական ժողովուրդին և առաջ զմեկին հեղափոխական շարժումը: Այժմ անցնենք խնդրի այդ կողմին:

Ռուսական բուրժուա—դեմոկրատական հեղափոխությունը (1905 թ.) ընթացավ տյալիսի պայմաններում, վորտեք տարրեր եյին Արևմուտքի պայմաններից հեղափոխական հեղաշրջումների ժամանակ, որինակի համար՝ Յրանս—սիայում և Գերմանիայում: Մինչդեռ հեղափոխությունն Արևմուտքում բարձրանում եր մանուֆակտուրային չրլանի և անդարդացած դասակարգային պայքարի պայմաններում, յերբ պրոլետարիատը թույլ եր ու սակավաթիվ, չունեց իր սեփական կուսակցությունը, վորը կարողանար ձևակերպել նրա պահանջները, իսկ բուրժուազիան բավականաչափ հեղափոխական եր բանվորներին ու դյուղացիներին իր նկատմամբ վտտահայտուն ներշնչելու և արիստոկրատային դեմ նրանց քաջարի տանելու համար,—Ռուսաստանում, ընդհանրապես, հե-

զափոխութիւնն սկսվեց (1905 թ.) մեքենային չրջանի և զարգացած դասակարգային սպառնալիքի պայմաններում, յերբ համեմատաբար բազմամարդ և կապիտալիզմի միջոցով համախմբված ռուսական պրոլետարիատն արդեն մի շարք մարտեր եր ունեցել բուրժուազիայի դեմ, ունենալով կուսակցութիւնը, վորն ավելի համախմբված եր, քան բուրժուականը, ունենալով դասակարգային պահանջները, իսկ ռուսական բուրժուականը, վոր այդ ժամանակ ապրում եր կառավարութիւնից վերջում պաշտպանելով, բազմապատկառնալի ահաբեկված եր պրոլետարիատի հեղափոխականութեամբ, վորպեսզի կարողանար ձգտել դաշինք կապելու կառավարութեան և կալվածատերերի հետ ընդդէմ բանվորներին և դուռնացիներին: Այն փաստը, վոր ռուսական հեղափոխութիւնը բռնկվեց Մանիֆեստի դաշտերում ձեռք բերած ռազմական անհաջողութիւնների հետևանքով, — այդ փաստը լոկ զարկ տվեց իրադարձութիւններին, վոչինչ օտակայն չիփոխելով դործի էությունը մեջ:

Իրադրութիւնը պահանջում եր, վորպեսզի պրոլետարիատը կանգնէր հեղափոխութեան դուռը, իր շարքը համախմբելով հեղափոխական գլուխացիութեանը և վճռական պայքար մղելով միաժամանակ թե՛ ցարիզմի և թե՛ բուրժուականի դեմ, հանուն յերկրի լիակատար դեմոկրատականացման և իր դասակարգային շահերի ապահովման:

Բայց մենչեիկները, հենց նրանք, վոր «պառկած են» մարքսիզմի տեսակետի վրա, հաջող լուծեցին յուրաքանչեւ ձևով. քանի վոր ռուսական հեղափոխութիւնը բուրժուական և, իսկ բուրժուական հեղափոխութիւններում ղեկավարում են բուրժուազիայի ներկայացուցիչները (տե՛ս Ֆրանսական և գերմանական հեղափոխութիւնների պատմութիւնը), ուստի պրոլետարիատը չի կարող ռուսական հեղափոխութեան հեղեմներ լինել. ղեկավարութիւնը պետք ե տրվի բուրժուազիային (նրան, վոր դավաճանում ե հեղափոխութեանը), դուռնացիութիւնը նույնպէս պետք ե դրվի բուրժուազիայի խնամքի տակ, իսկ պրոլետարիատը պետք ե մնա ծայրահեղ ձախ ուղղութիւնի դիրքում: Յե՛կ վատթար լինելով յերկրի աշխարհի կրկնակցութիւնները մենչեիկներին կողմից ներկայացվում են իրեն իրեն «բուռն» մարքսիզմի վերջին խոսքը...

Լենինի մեծագույն ծառայութիւնը ռուսական հեղափոխութեան առաջ կայանում ե նրանում, վոր նա մինչև արմատները բաց արավ մենչեիկներին պատմական պարայնների դատարկութիւնը և բանվորական դործը բուրժուազիայի ճանկը նետող մենչեիկյան «հեղափոխութեան սխեմայի» վողջ վտանգը: Պրոլետարիատի և գլուխացիութեան հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա բուրժուազիայի դիկտատուրայի փոխարեն, բուլղիկյան Դումայի բոյկոտ և դինամիտ ապստամբութիւն Դումային մասնակցելու և այնտեղ սահմանափակ աշխատանք կատարելու փոխարեն, «ձախ բոյկոտ» իդեա, յերբ Դուման համենայն դեպս կայացել եր, և Դումայի ամբիոնի ոգտադործում Դումայից դուրս պայքարելու համար՝ կողակտական միջնորդութեան և Դումայի ակալիցին «պահպանման» փոխարեն, սպաքար կազմատական կուսակցութեան դեմ իրեն հեղափոխական ուժի, նրա հետ բոլի կազմելու փոխարեն, — ահա թե ինչպիսի տակտիկա յեր զարգացնում Լենինն իր «Յերկու տակտիկա», «Կառգիտները հաղթանակը» նշանավոր բրոշյուրներում:

Այս պլանի արժանիքն այն եր, վոր նա, ուղղակի ու վճռականորեն ձեռնկերվելով պրոլետարիատի դասակարգային պահանջները բարձու-դեմոկրատական հեղափոխութեան պահանջները, իր մեջ սաղմնային վիճակում կրում եր պրոլետարիատի դիկտատուրայի իդ'ան: Այս տակտիկական պլանի համար մղած պայքարում ռուսական պրոլետարիատի մեծ մասը գնաց Լենինի հետևից վճռականորեն ու անվերադարձ: Այս պլանի հաղթանակը հիմք դրեց այն հեղափոխական տակտիկային, վորի շնորհիվ այսօր մեր կուսակցութիւնը ցնցում ե համախմբական իմպերիալիզմի հիմքերը:

Դեպքերի հետագա զարգացումը, չորսամյա իմպերիալիստական պատերազմը և վողջ ժողովրդական տնտեսութեան ցնցումը, Փետրվարյան հեղափոխութիւնը և նշանավոր յերկրի խնդիրները, ժամանակավոր կառավարութիւնը՝ վորպէս բուրժուական հակահեղափոխութեան ուժախ, և պետերբուրգյան խորհուրդը՝ վորպէս սաղմնավորվող պրոլետարական դիկտատուրայի մե, հոկտեմբերյան հեղաշրջումը և Հիմնադիր ժողովի ցրումը, բուրժուական պարլամենտարիզմի վերացումը և Խորհուրդների հանրապետութեան հռչակումը, իմպերիալիստական պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի և համաշխարհային իմպերիալիզմի յեկույթը, խոսքով «մարքսիստներին» հետ միասին՝ ընդդէմ պրոլետարական հեղափոխութեան, վերջապէս՝ Հիմնադիր ժողովին կաշած, պրոլետարիատի միջոցով նախից դուրս չարտված և հեղափոխական աշխույժ կապիտալիզմի փոքր նետված մենչեիկներին վողորմելի դիրքը, — այս բոլորը լոկ հաստատեցին Լենինի «Յերկու տակտիկա»-յում ձեռնկերված հեղափոխական տակտիկայի հիմնական սխեմայի ճշտութիւնը: Իր ձեռքում աշխույժի ժառանգութիւնն ունեցող կուսակցութիւնը կարող եր խելախառալ լողալ, չլիստենալով ընդդէմ խորակներին:

Պրոլետարական հեղափոխութեան մեր ժամանակներում, յերբ կուսակցութեան յուրաքանչյուր լողունը և տաղանդալի յուրաքանչյուր նախադասութիւնն ոտուղվում ե դործով, պրոլետարիատն իր առաջնորդներին հատուկ պահանջներ և առաջադրում: Պատմութիւնը ճանաչում ե պրոլետարական առաջնորդներ, փոթորիկահույզ ժամանակների առաջնորդներ, պրակտիկ առաջնորդներ, անձնագործ և խիզախ, բայց թեթեւաբան թույլ: Մասնաւոր շուտ չեն մոռանում աշխույժի առաջնորդների անունները: Բայց շարժման ամբողջական վերջացած չի կարող ապրել սոսկ հիշատակներով. նրան հարկավոր ե հասակ նպատակ (ծրագիր), հաստատուն դիմ (տակտիկա): Այդպիսին են, որինտիկ, Լաստալը Գերմանիայում, Բլանկին Ֆրանսիայում: Կան նաև այլ տեսակի առաջնորդներ, լազալ ժամանակների առաջնորդներ, թեթեւաբան ու ժեղ, բայց կազմակերպման և դործնական աշխատանքի խելիքներում: Թույլ: Այդպիսի առաջնորդները ժողովրդականութիւնն ունեն լոկ պրոլետարիատի վերնախավում, և այն ել լոկ վողջ չափով. հեղափոխական դարաշրջանը վրա հասնելիս, յերբ առաջնորդներից պահանջվում են հեղափոխական-դործնական լողուններ, տեսարանները հեռանում են տապալակից, տեղը զիջելով նոր մարդկանց: Այդպիսին են, որինտիկ համար, Պլեխանովը Ռուսաստանում, Կաուցկին Գերմանիայում:

Վորպեսզի պրոլետարական հեղափոխության և պրոլետարական կուսակա-
ցության առաջնորդը դժմանա իր գերբերում, անհրաժեշտ է, վոր նա իր մեջ
թնորհակական կարողությունը զուգորդի պրոլետարական շարժման պրակ-
տիկ-կազմակերպական փորձի հետ: Գ. Ակսելրոդը, յերբ մարքսիստ եր, Լե-
նինի մասին գրում եր, թե նա զիւր մեջ լավ պրակտիկի փորձը հաջողութեամբ
միացնում ե թնորհակի կրթության և լայն քաղաքական հորիզոնի հետ: (տես
Գ. Ակսելրոդի առաջարանը Լենինի գիտական օրոյալ-գեմոկրատների խնդրա-
ները բրոշյուրին): Թե ի՞նչ կասեր հիմա ընկ. Լենինի մասին գիտությունը-
կան՝ կապիտալիզմի իդեոլոգիա. Ակսելրոդը, — գովար չն կռահել: Բայց մեզ
համար, վոր Լենինին մոտիկից ճանաչում ենք և կարող ենք որոշակիութեան
նայել խնդրին, անկասկած է, վոր այդ հին հատկությունն ամբողջապէս պահ-
պանված է Լենինի մեջ: Ի միջի այլոց, զրանում պետք է փնտռել այն փառ-
տի բացատրությունը, վոր Լենինը, և հենց նա, ներկայումս հանդիսանում է
աշխարհի ամենաուժեղ և ամենակոփւած պրոլետարական կուսակցության առ-
աջնորդը:

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

ՃԱՌ ԿՐԵՄԼԵԱՆ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՅԵՐԵԿՈՒՅԹՈՒՄ
(1924 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 28)

Ընկերներ, ինձ ասացին, վոր այստեղ ձեզ մոտ կազմակերպւած է Լենինի
մասին հուշերի յերեկո, իսկ յես հրաւիրւած եմ յերեկոյթին իրեւ գեկու-
ցողներէջ մեկը: Յեռ յենթադրում եմ, վոր անհրաժեշտ չի կապակցական դե-
կուցում ներկայացնել Լենինի գործունեության մասին: Յես կարծում եմ, վոր
ավելի լավ կլիներ օգնմանափակվել, հաղորդելով մի չարք փաստեր, վորոնք
նշելին Լենինի առանձնահատկությունները՝ վորպէս մարդու և վորպէս գործ-
չի: Այս փաստերի միջև, թերեւ, ներքին կապ չի լինի, բայց այդ չի կարող
վճռական նշանակություն ունենալ Լենինի մասին ընդհանուր պատկերացում
տալու համար: Համենայն դեպս յես հնարավորություն չունեմ ավելի գեղ-
ջում ձեզ ավելի բան տալ, քան խոստացա վերեւում:

ԼԵՆԻՆԻ ԱՐԾԻՎ

Յես Լենինի հետ առաջին անգամ ծանոթացա 1903 թ.: Ճիշտ է, այդ ժա-
նութությունն անձնական չէր, այլ հեռակա, դրադրության կարգով: Բայց նա
իմ մեջ թողել է անշինջ տպավորություն, վորը յես չեմ մոռացել կուսակ-
ցության մեջ կատարած իմ աշխատանքի ամբողջ ընթացքում: Յես այն ժա-
մանակ Սիբիրում աքսորական եյի: 90-ական թվականների վերջերից սկսած և
հատկապէս 1901 թվից, Վուկրաշ-յի հրատարակությանից հետո, Լենինի գոր-
ծունեության հետ ունեցած ծանոթությունն ինձ հանգել եր ավել այն յեզ-
րակացությանը, վոր մենք հանձին Լենինի ունենք մի անսովոր մարդու: Այն
ժամանակ նա իմ աչքին սոսկ կուսակցության ղեկավար չէր, նա նրա փառ-
տական օտեղծողն եր, վորովհետեւ միայն նա յեր, վոր հասկանում եր մեր կու-
սակցության ներքին էությունը և անհետաձգելի կարիքները: Յերը յես նրան
համեմատում եյի մեր կուսակցության մյուս ղեկավարների հետ, ինձ շարու-
նակ թվում եր, վոր Լենինի զինակիցները — Պլեխանովը, Մարտովը, Ակսել-
րոդը և մյուսները — Լենինից ամբողջ գլխով ցածր են կանգնած, վոր Լենինը
նրանց համեմատութեամբ սոսկ ղեկավարներից մեկը չէ, այլ բարձրագոյն
տիպի ղեկավարը, լեռան արծիւ, վոր չգիտե ինչ և վախը պայքարում և կու-
սակցությունը խիղիւրդեն առաջ և վարում առաջական հեղափոխական շարժ-
ման անձանթ ուղիներով: Այդ տպավորությունն այնքան խորը նստեց իմ
օրտում, վոր յես անհրաժեշտություն զգացի նրա մասին գրել իմ մի մոտիկ
ընկերով, վոր այն ժամանակ եմիդրացիայում եր գտնվում, նրանից կարծիք
պահանջելով: Միքանի ժամանակ անց, յերբ յես արդեն Սիբիրում աքսորական
եյի, — այդ 1903 թ. վերջերքին եր, — յես ստացա իմ ընկերոջ խանդավառ պա-

տառախոնքը և մի պարզ, բայց խորապես բովանդակային նամակ Լենինից, վորին, ինչպես պարզվեց, ընկերս ծանոթացրել էր իմ նամակի հետ։ Լենինի նամակը համեմատաբար մեծ չէր, բայց նա տալիս էր մեր կուսակցության պրակտիկայի խիզախ, անվախ քննադատությունը և մոտազուրկ չընթանի համար կուսակցության աշխատանքի ամբողջ պլանի զարմանալի հստակ ու սեղմ շարադրումը։ Միայն Լենինը կարող էր ամենախճճված բաների մասին գրել այդքան պարզ ու հստակ, սեղմ ու համարձակ, յերբ յուրաքանչյուր նախադասություն վոչ թե խոսում, այլ կրակում է։ Այս պարզ և համարձակ նամակ՝ ե՛լ ավելի ամբապնդեց իմ այն կարծիքը, թե հանձին Լենինի մենք ունենք մեր կուսակցության լեռան արծաթին։ Չեմ կարող ներել ինձ այն բանում, վոր Լենինի այդ նամակը, ինչպես շատ ուրիշ նամակներ, հին ընդհատակյա աշխատողի սովորության համաձայն կրակվին հանձնեցի։

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի հետ։

ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ

Յես Լենինին առաջին անգամ հանդիպեցի 1905 թ. դեկտեմբերին Տամբեր-Փորում (Ֆինլանդիայում) բալլադիկները կոնֆերանսում։ Յես հույս ունեցի տեսնել մեր կուսակցության լեռան արծաթին, մեծ մարդուն, մեծ վոչ միայն քաղաքականապես, այլև, յեթե կուզեք, նաև ֆիզիկապես, վորովհետև Լենինին իմ յերեակայության մեծ դժադրվում էր իրեն վայելչակազմ ու պարթև մի հակա։ Ինչպիսին էր իմ հիասթափությունը, յերբ յես տեսա ամենասովորական մի մարդու, միջակ հասակից ցածր, վոր վոչնչով, բառիս բուն նշանակությամբ վոչնչով չէր տարբերվում սովորական մահաանցուցիցից...

Ընդունված է, վոր «մեծ մարդը» սովորաբար պետք է ժողովից ուշանա, վորպեսզի ժողովականները չնշակուր սպասեն նրա յերեան դալուն, ըստ վորում մեծ մարդու յերեան դալուց առաջ ժողովականները նախադրույանում են — «տե՛ս... լուցե՛ք... դալի՛ք»։ Այդ ծխակատարությունն ինձ ավելորդ չէր թվում, վորովհետև նա չհաղորդում է, հարգանք է ներշնչում։ Իսկ ինչպիսին յեղավ իմ հիասթափությունը, յերբ յես իմացա, վոր Լենինը ժողովի յեր յեկել պատգամավորներից առաջ և մի անկյուն մտած, հասարակ յեղանակով զբուցում է, ամենասովորական մի զբույց կոնֆերանսի ամենասովորական պատգամավորների հետ։ Չեմ թաղցնում, վոր այն ժամանակ այդ ինձ թվաց իրեն վորոշ անհրաժեշտ կանոնների վորոշ խախտում։

Հետագայում միայն յես հասկացա, վոր Լենինի այդ պարզությունն ու համեմատությունը, անհիատ մնալու կամ, համենայն դեպս, աչքի չլարելու և իր բարձր դիրքը չընդգծելու այդ ճղտումը, — այդ դիրքը ներկայացնում է Լենինի ամենաուժեղ կողմերից մեկը, իրեն նոր մասսաների, մարդկության ամենախորունկ «ներքնախալների» պարզ ու սովորական մասսաների նոր առաջնորդի։

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺ

Ուշադրով եյին այդ կոնֆերանսում Լենինի արտասանած յերկու ճառերը — ընթացիկ մոմենտի և աղբարային հարցի մասին։ Նրանք, դժբախտա-

բար, չեն մնացել։ Դրանք վողեարված ճառեր եյին, վոր բուն խաղաղա-տուությամբ համակեցին ամբողջ կոնֆերանսը։ Համոզմունքի անսովոր ուժ, յիստադրված պարզություն և հստակություն, կարճ և բոլորին հասկանալի նախադասություններ, պաճուճանքի բացակայություն, սովորություն առաջացնելու միտում — անցող գլխավորություն յեստեղի և եֆեկտավոր ֆրազաների բացակայություն — այս բոլորը նպաստավոր կերպով տարբերում էյին Լենինի ճառը սովորական «պարլամենտական» հետադարձ ճառերից։

Բայց այն ժամանակ Լենինի ճառերի այդ կողմը չէր, վոր կախարհեց ինձ։ Ինձ կախարհեց արամբանության այն անդարտելի ուժը Լենինի ճառերում, վորը փոքր ինչ չոր, բայց դրա դիմաց հիմնովին տիրապետում է լսարանին, հետզհետե ելեկտրականացնում է նրան, ապա նրան դերում է, ինչպես ասում են, առանց մնացորդի։ Հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ պատգամավորներից շատերն ասում էյին. «Տրամաբանությունը Լենինի ճառերում, դա մի տեսակ ամենակարող շոտիկներ են, վորոնք յեղ բունում են բոլոր կողմերից աղբանի պես և վորոնցից դուրս պրծնել անկարող ես. կա՛մ հանձնվիր, կա՛մ վորոշիք լիակատար ձախողման յենթարկվել»։

Յես կարծում եմ, վոր Լենինի ճառերի այդ առանձնահատկությունը նրա հետադարձ արվեստի ամենաուժեղ կողմն է հանդիսանում։

ԱՌԱՆՑ ՀԵՆՐԻԱՆՔԻ

Յերկրորդ անգամ յես Լենինին հանդիպեցի 1906 թ. մեր կուսակցության Ստոկհոլմյան համագումարում։ Հայանի յես, վոր այս համագումարում բալլադիկները վողբումամանություն մնացին, պարտություն կրեցին։ Յես այն ժամանակ առաջին անգամն էյի Լենինին տեսնում պարտվողի դերում։ Նա ամենաչնչին չափով անգամ չէր նմանվում այն առաջնորդներին, վորոնք հեկեկում և վհատվում են պարտությունից հետո։ Ընդհակառակը, պարտությունը Լենինին դարձրեց յեռանդի խառցում, վոր վողեարում էր իր կողմնակիցներին նոր մարտերի, ապագա հաղթանակի համար։ Յես խոսում եմ Լենինի պարտության մասին։ Բայց ինչպիսին պարտություն էր այդ։ Պետք էր նայել Լենինի հակառակորդներին, Ստոկհոլմյան համագումարում հաղթողներին — Պլենինին, Ալեսլոդի, Մարտովի և մյուսների վրա, նրանք շատ քիչ բանով նման էյին իսկական հաղթողների, վորովհետև Լենինը, մենչևիզմի իր անխնա քննադատությամբ, նրանց վրա, ինչպես ասում են, վողջ տեղ չթողեց։ Հիշում եմ, թե ինչպես մենք, բալլադիկ պատգամավորներս, մի տեղ խմբված նսյում էյինք Լենինին, նրանից խորհուրդ հարցնելով։ Միքանի պատգամավորների ճառերում յերեում էր հոգնածություն, վհատություն։ Հիշում եմ, թե ինչպես Լենինը, պատասխանելով այդ ճառերին, ասածների միջից կծու մուլտաց. «Մի՛ք հեկեկա, բեկերներ, մենք անպայման կհաղթենք, վորովհետև մենք իրավացի յենք»։ Ատելություն հեկեկացող ինտելիգենտների հանդեպ, սեփական ուժերի հավատք, հաղթանակի հավատք, — ահա թե ինչի մասին էր այն ժամանակ մեղ հետ խոսում Լենինը։ Ձգացվում էր, վոր բալլադիկների պարտությունը ժամանակավոր է, վոր բալլադիկները կհաղթեն մոտիկ ապագայում։

«Չհնկեկալ պարտութեան դեպքում» — դա Լենինի գործունեության այն առանձնահատկությունն է, վորը նրան ոգնեց իր շուրջը համախմբելու միևնույն գերը նվիրված և սեփական ուժերին հավատք ընծայող մի բանակ:

ԱՌԱՆՅ ԱՄԲԱՐՏԱՎԱՆՈՒԹՅԱՆ

Հաջորդ համադրումարում, 1907 թ. Լոնդոնում, բայելեկները հաղթող հանդիսացան: Յեւ այն ժամանակ առաջին անգամն էլ Լենինին տեսնում հաղթողի դերում: Սովորաբար հաղթանակը գլխավորություն է առաջացնում ուրիշ առաջնորդների մոտ, նրանց դարձնում է գլուխը և ամբարտապան: Այդպիսի դեպքերում շատ հաճախ սկսում են հաղթանակը տոնել, դափնեփնջերի վրա հանադրատանալ: Բայց Լենինն ամենաշնչին չափով անդամ չէր նամանում աղափարի առաջնորդներին: Ընդհակառակը, հենց հաղթանակից հետո յեր նա առանձնապես աշխուրջ ու զգուշավոր դառնում: Հիշում եմ, թե ինչպես Լենինն այն ժամանակ հաստատակամորեն ներշնչում էր պատգամավորներին. «առաջին գործը հաղթանակով չտարվել և չամբարտապանալն է. յերկրորդ գործը՝ ամբողջել ձեռք բերված հաղթանակը, յերրորդ՝ միևնույն վերջը ջախջախել հաղապարհորդին, վորովհետեւ նա լուրջ ջախջախված է, բայց դեռ յերբեք մինչև վերջը չի ջախջախված»: Նա կծու ծաղրում էր այն պատողամբներին, վորոնք թեթևամտորեն հավատացնում էին, թե «այլևս մենչեիկներն հաշիվը վերջացած են»: Նրա համար դժվար չէր աղացուցել, վոր մենչեիկները դեռևս արժաններ ունեն բանվորական շարժման մեջ, վոր նրանց դեմ հարկավոր է պայքարել հմտորեն, ամեն կերպ խուսափելով սեփական ուժերը դերադնահատելուց և մանավանդ հակառակորդի ուժերը թերադնահատելուց:

«Չամբարտապանանալ հաղթանակից» — դա Լենինի բնավորության հենց այն առանձնահատկությունն է, վորը նրան ոգնեց լրջորեն կռառառել հաղապարհորդի ուժերը և կուսակցությանն ապահովագրել հնարավոր անակնկալներին:

ՍԿՋԱՌՈՒՆԻՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Կուսակցության առաջնորդները չեն կարող թանգ չդնահատել իրենց կուսակցության մեծամասնության կարծիքը: Մեծամասնությունը — դա այն ուժն է, վորը չի կարող հաշիվ չառնել առաջնորդը: Լենինն այդ նույնքան լավ էր հասկանում, վորքան կուսակցության ամեն մի այլ ղեկավար: Բայց Լենինը յերբեք մեծամասնության գերին չէր դառնում, մանավանդ, յերբ այդ մեծամասնությունն իր վտարների տակ սկզբունքային հիմք չուներ: Մոմենտներ են յեղել մեր կուսակցության պատմության մեջ, յերբ մեծամասնության կարծիքը կամ կուսակցության բոլորական շահերն ընդհարվելիս են յեղել պրոլետարիատի արժատական շահերի հետ: Այդպիսի դեպքերում Լենինն առանց յերկար ու բարակ մտածելու, կանգնում էր սկզբունքայնության կողմն՝ ընդդիմ կուսակցության մեծամասնության: Այդպիսի նա չէր վախենում այդպիսի դեպքերում բառիս բուն նշանակությունը մին-մենակ գուրս գալ ընդդիմ բուրքի, հաշիվ առնելով այն, — ինչպես հաճախ էր նա այդ անունը, — վոր «սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն է»:

Այդ տեսակետից առանձնապես բնորոշ են հետևյալ յերկու փաստերը:

Առաջին փաստ: 1909—1911 թ.թ. չբնանը, յերբ կուսակցությունը, հա-

կահեղափոխության կողմից ջախջախված, լիակատար քայքայում էր տարած: Պա կուսակցությանը հավատ չընծայելու չբնան էր, մի չբնան, յերբ մի գլուխ փախում է յին կուսակցությունից՝ վոր միայն ինտելիգենտները, այլև մասամբ բանվորները, ընդհատակյա գործունեությունը ժխտելու չբնանը, լիվիդայա տորությունն է կուսակցության չբնանը: Վոր միայն մենչեիկները, այլև բայելեկներն այն ժամանակ ներկայացնում էին մի ամբողջ շարք ֆրակցիաներ և հոսանքներ, վորոնք մեծ մասամբ կտրված էին բանվորական շարժումից: Հայտնի յե, վոր հենց այդ չբնանում ծագեց ընդհատակյա գործունեության լիակատար վերացման և բանվորներին լիզալ, լիբերալ ստոխիստիկյան կուսակցության մեջ կազմակերպելու իրենան: Լենինն այն ժամանակ միակն էր, վոր չենթարկվեց ընդհանուր հիվանդությանը և բարձր պահեց կուսակցականության գլուխը, հավաքելով կուսակցության բանական-բանական ու ջախջախված ուժերին զայրմանայի համբերությունը և շտանդարտ համառությունը, կովնելով բուրք և ամեն տեսակ հակախուսակցական հոսանքների դեմ բանվորական շարժման ներսում, պաշտպանելով կուսակցականությունն անխախտ արիությունը և շտեմոված հաստատակամությունը:

Հայտնի յե, վոր կուսակցականության վերաբերյալ այս վեճում Լենինը հետո հաղթական դուրս յեկավ:

Յերկարդ փաստ: 1914—1917 թ.թ. չբնանը, իմպերիալիստական պատերազմի ամենախուսումն չբնանը, յերբ բուրք կամ գրեթե բուրք սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, յենթարկվելով ընդհանուր հայրենասիրական ախիսին, ծառայողիցին հայրենական իմպերիալիզմին: Այդ մի չբնան էր, յերբ Յերկարդ Ինտերնացիոնալն իր գրեթե անհրաժեշտ կադրերով առաջ, յերբ չովինիստական ալիքի առաջ յեկին դիմանում անգամ այնպիսի մարդիկ, ինչպիսիք են Պլեխանովը, Կաուցկին, Գեդը և մյուսները: Լենինն այն ժամանակ միակը կամ գրեթե միակն էր, վոր վճռական պայքար բարձրացրեց ընդդիմ սոցիալ-դովինիզմի և սոցիալ-դոկտրինի, մերկացրեց Գեդերի ու Կաուցկիների դավաճանությունը և խարանեց միակ ինչի տեր «հեղափոխականներին» կիսատ-պոտտությունը: Լենինը հասկանում էր, վոր իր հետևից ունի աննշան փոքրամասնություն. բայց այդ նրա համար վճռական նշանակություն չուներ, վորովհետեւ նա գիտեր, վոր ապագա ունեցող միակ ճշգրիտ քաղաքականությունը հետեղական ինտերնացիոնալիզմի քաղաքականությունն է, վորովհետեւ նա գիտեր, վոր սկզբունքային քաղաքականությունը միակ ճշգրիտ քաղաքականությունն է:

Հայտնի յե, վոր նոր Ինտերնացիոնալը վերաբերյալ այս վեճում ևս Լենինը հաղթական դուրս յեկավ:

«Սկզբունքային քաղաքականությունը միակ ճշգրիտ քաղաքականությունն է» — դա հենց այն ֆորմուլան է, վորի ոգնությունը Լենինը գրոհով վերցրեց նոր «ամբառուլի» գիրքեր, հեղափոխական մարքսիզմի կողմը նվաճելով պրոլետարիատի լավագույն տարրերին:

ՀԱՎԱՏՔ ՄԱՍՍԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Կուսակցությունների տեսարաններն ու առաջնորդները, վորոնք գիտեն ժողովուրդների պատմությունը, ուսումնասիրել են հեղափոխությունների

պատմութիւնն ակզբից մինչև վերջը, յերբեմն վարակվում են մի անպատեհ հիվանդութեամբ: Այդ հիվանդութիւնը կրելով և մասսաներէց վախենալ, մասսաների ստեղծարար ընդունակութիւններն չհավատալ: Այս հոգի վրա յերբեմն առաջանում է առաջնորդների ինչ-վոր արխատկրատիզմ մասսաների նկատմամբ, առաջնորդներ, վորոնք հեղափոխութիւնների պատմութեամբ փորձված չեն, բայց կռիված են ջանքախել հինը և նորը կառուցել: Պախ, թե ասերբը կարող է ալեկոծվել, թե մասսաները կարող են «հիշել շատ ավելի բաներ», դայակի դեր խաղալու ցանկութիւն, դայակ, վոր աշխատում է մասսաներին սովորեցնել զրգերի վրա, բայց չի ցանկանում սովորել մասսաներից, — այդպիսին է արխատկրատիզմի այս տեսակի հիմունքը:

Լենինը լիակատար հակադրութիւն էր ներկայացնում այդպիսի առաջնորդներին նկատմամբ: Յեւ չեմ ճանաչում մի այլ հեղափոխականի, վորն այնքան խորը համատ ընծայեր պրոլետարիատի ստեղծարար ուժերին և նրա դասակարգային ընտրելի հեղափոխական նպատակահարմարութեանը, վորքան Լենինը: Յեւ չեմ ճանաչում մի այլ հեղափոխականի, վորը կարողանար այնքան անխնայ մտրակել «հեղափոխութեան քառսի» և «մասսաների ինքնիշխան դործողութիւնների վակխանալիայի» ինքնագոհ քննադատներին, վորքան Լենինը: Հելուս եմ, թե ինչպէս մի զրուցի ժամանակ, ի պատասխան ընկերներից մեկի այն դիտողութեանը, թե «հեղափոխութիւնից հետո սկսեց և նորմալ կարգ սահմանվի», Լենինը կծու հեղեղութեամբ նկատեց. «Վա՛յ այն մարդկանց, վորոնք ցանկանում են հեղափոխական լինել, բայց մոռանում են, վոր պատմութեան մեջ ամենից ավելի նորմալ կարգը հեղափոխութեան կարգն է հանդիսանում»:

Այդտեղից էր բխում Լենինի արհամարհական վերաբերմունքը բոլոր նրանց հանդեպ, վորոնք աշխատում էին բարձրից նայել մասսաների վրա և զրբերով սովորեցնել նրանց: Այդտեղից էր բխում Լենինի անդուլ քարոզը — սովորել մասսաներից, իմաստավորել նրանց դործողութիւնները, ուշի-ուշով ուսումնասիրել մասսաների պայքարի դործնական փորձը:

Համատը մասսաների ստեղծարար ուժերին — դա Լենինի դործունեութեան այն առանձնահատկութիւնն է, վորը նրան հնարավորութիւն տվեց իմաստավորել տարբեր և նրա շարժումն ուղղել դեպի պրոլետարական հեղափոխութեան հունը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՃԱՐ

Լենինը ծնված էր հեղափոխութեան համար: Նա իրոք հեղափոխական պայքարիւնների հանձարն էր և հեղափոխական ղեկավարման մեծագույն վարպետը: Նա յերբեք իրեն այնքան աղատ և ուրախ չէր զգում, վորքան հեղափոխական ցնցումների դարաշրջանում: Սրանով յեւ ամենեւին չեմ ուզում ասած լինել, վոր Լենինը համարապէս խրախուսում էր ամեն մի հեղափոխական ցնցում, կամ վոր շարունակ և ամեն պայմաններում կողմնակից էր հեղափոխական պայքարին: Ամենեւին: Սրանով յեւ ուզում եմ լոկ ասած լինել, վոր յերբեք Լենինի հանձարեղ օրամտութիւնը չէր դրսևորվում այնքան լրիվ և այնքան հստակ, վորքան հեղափոխական պայքարիւնների ժամանակ: Հեղա-

փոխական շրջադարձերի սրերին նա բառիս բուն նշանակութեամբ փթթում էր, դառնում էր պայքարառատ, կանխագուշակում էր դատարկութիւն շարժումը և հեղափոխութեան հավանական զիջողները, այդպիսին տեսնելով ասեց թե արի մեջ: Իդուր չե, վոր մեր կուսակցական շրջանակներում ասում են, թե «Լիլլը գիտե լողալ հեղափոխութեան ալիքներում, ինչպէս ձուկը ջրում»:

Այստեղից՝ Լենինի տակտիկական լողունքների «զարմանալի» հստակութիւնը և հեղափոխական դիտավորութիւնների «զիլապտույտ» խիզախութիւնը: Հիշում եմ յերկու առանձնապէս ընդող վիստ, վորոնք նշում են Լենինի այդ առանձնահատկութիւնը:

Առաջին փաստ: Հոկտեմբերյան հեղաշրջմանը նախորդող շրջանը, յերբ միլիտանտ բանվորներ, գյուղացիներ և զինվորներ, վորոնք հալածում էր ճշդ-նաժամը թիկունքում և ճակատում, խաղաղութիւն և ազատութիւն էին պահանջում: Երբ ղեկերակները և բուրժուազիան ռազմական դիկտատուրա ելին պատրաստում ի նպատ «մինչև վերջը պատերազմելու»: Երբ վողջ այսպէս կոչված «հասարակական կարծիք», բոլոր այսպէս կոչված «սոցիալիստական կուսակցութիւնները» բալլէրիկների դեմ էլին կանոնաւոր, նրանց հետ վարվելով իրրե «գերմանական լրտեսներէ»: Երբ կերենակին ճգնում էր ընդհատակայ քել, — և մասամբ կորողացալ քել բալլէրիկների կուսակցութեանը: Երբ, ավստրո-գերմանական կուսիցիայի դեռևս հոգր ու կարգապահ բանակները կանոնաւոր էլին մեր հոգնած ու քայքայված բանակների դեմ, իսկ արևմտա-յեվրոպական «սոցիալիստները» բարենաւոր բոլի մեջ էլին իրենց կատապալութիւնների հետ ի նպատ «պատերազմի» մինչև լիակատար հաղթանակը...

Ինչ էր նշանակում ապստամբութիւն բարձրացնել այդպիսի պահին: Այդ պայմաններում ապստամբութիւն բարձրացնել նշանակում էր ամեն ինչ խաղաքարի վրա դնել: Բայց Լենինը չէր վախենում ռիսկ անել, վորովհետև նա դիտեր, տեսնում էր իր պայծառատես հայացքով, վոր ապստամբութիւնն անխուսափելի յե, վոր ապստամբութիւնը կհաղթի, վոր ապստամբութիւնը Ռուսաստանում իմպերիալիստական պատերազմի վախճան կպատրաստի, վոր ապստամբութիւնը Ռուսաստանում կլիքափահարի Արևմուտքի տանջված մասսաներին, վոր ապստամբութիւնը Ռուսաստանում իմպերիալիստական պատերազմը կվերածի քաղաքացիական պատերազմի, վոր ապստամբութիւնը խորհուրդների հանրապետութիւն կտա, վոր խորհուրդների հանրապետութիւնը իրրե պատեղ կծառայի ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման համար:

Հայտնի յե, վոր Լենինի այն հեղափոխական կանխատեսութիւնը հետագայում իրադրվեց չտեսնված ճշգրտութեամբ:

Յերկրորդ փաստ: Առաջին սրերը Հոկտեմբերյան հեղափոխութիւնից հետո, յերբ ժողովրդական կոմիտեների Խորհուրդը փորձում էր ստիպել, վոր խռովաբար գնեւալը, զլխավոր հրամանատար Դուխոնինը զաղարեցնի ռազմական դործողութիւնները և գերմանացիների հետ հաշտութեան մասին բռնակցութիւններ բաց անի: Հիշում եմ, թե ինչպէս Լենինը, կրկնակի (ապագա գլխավոր հրամանատարը) և յե Պիտերում զնայինք Գլխավոր շտաբը, վոր պնդի հեռադրով բռնակցելին Դուխոնինի հետ: Բոպէն ահալի յեր Դուխոնինը և Ստավկան կատեգորիկ կերպով հրամարվեցին կատարելու ժողովում:

խորհի հրամանը: Բանակի հրամանատարական կազմն ամբողջապես Ստավկայի ձեռքումն եր գտնվում: Ինչ վերաբերում է զինվորներին, անհայտ էր, թե ինչ կատի 12 միլիոնանոց բանակը, վորը յենթարկվում եր խորհրդային իշխանության զեմ արամադրված՝ այսպես կոչված բանակային կազմակերպություններին: Պիտեօում, ինչպես հայտնի յե, այն ժամանակ հասունանում եր յունկերների ապստամբությունը: Բացի այդ, կերենսկին պատերաժի յեր գալիս Պիտերի վրա: Հիշում եմ, թե ինչպես հեռագրաթերի մոտ վորոշ պատվայից հետո Լենինի զեմքը լուսավորվեց ինչ-վոր անսովոր լույսով: Եկեաում եր, վոր նա արդեն վորոշում կայացրել եր: «Գնանք սպիտկ-կայան, —ասաց Լենինը,— նա մեզ ծառայություն կմատուցի. մենք հատուկ հրամանով կհանենք զենեքալ Դուխոնինին, նրա տեղը գլխավոր հրամանատար կենանակենք բնի, կբիլենկոյին և հրամանատարական կազմի գլխի վրայով կոչ կուղղենք զինվորներին — չրջապատել, գեներայիներին, դադարեցնել ստորմական գործողությունները, կասովել ավտար — կերմանական զինվորների հետ և խաղաղության գործը վերցնել իրենց ձեռքը:

Դա լուրացումն եր զեւղի անհայտությունը: Բայց Լենինը չեր վախենում այդ «լուստ ունից», ընդհակառակը, նա ընդառաջում եր նրան, վորովհետեւ նա զիտեր, վոր բանակը խաղաղություն է ուղում, և նա կնվաճի այդ խաղաղությունը, զեւղի խաղաղությունը տանող ճանապարհին սրբելով բոլոր և ամեն տեսակ խոչընդոտները, վորովհետեւ նա զիտեր, վոր խաղաղություն հաստատելու՝ այդպիսի յեղանակը զուր չի անցնի: ավտար-զերմանական զինվորների համար, վոր նա աղատ տապաքեղ կտա խաղաղության ձգտման անխախտ բոլոր ճակատներում:

Հայտնի յե, վոր Լենինի այս հեղափոխական կանխատեսությունը նույնպես հետադաշում իրագործվեց ամբողջ ճշգրտությամբ:

Հանճարեղ արատեսություն, վերահաս իրադարձությունների ներքին թմառան արագ բռնկու և յունում տալու բնութանկություն — դա Լենինի այն հատկությունն է, վորը նրան արենց ճիշտ օտբատեղեա և հասակ վարքաղի նշել հեղափոխական շարժման չրջապարձերում:

ԳԻՆՆ Ե Ե Վ. (1 մ.)

И. СТАЛИН
О ЛЕНИНЕ
Госиздат СССР. 1932 г.

«Ազգային գրադարան



NL0174926

Հանձնված է տպագրության 14 հունվարի 1932 թ.

Ստորագրված է տպել 20 հունվարի 1932 թ.

Կատվեր № 193

Կլավիտ 7059 (Ը)

Տիրաժ 30.000